

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Յոթ Խոսք Խաչի Վրայից

Մաս 7

«Եվ ժամը վեցի դեմ էր. և բոլոր երկրի վրա խավար եղավ մինչև ինը ժամը. և արեգակը խավարվեցավ, և տաճարի վարագույրը միջիցը ճղվեցավ: Եվ Հիսուսը մեծ ձայնով կանչեց և ասեց. Հայր, հոգիս քո ձեռն եմ ավանդում. և այս ասելով հոգի տվավ: Եվ հարյուր-ապետը եղածը տեսնելով, Աստծո փառք տվավ և ասեց. Հիրավի՛ այս մարդն արդար էր:» Ղուկաս 23:44-47

1- Ես երկնքում մի Հայր ունեմ, որ սիրում է ինձ
«ՀԱՅՐ, հոգիս քո ձեռն եմ ավանդում.»

«Ինչպես որ հայրը կգթա որդիներին, այնպես գթած է Տերը իրանից վախեցողներին.» Սաղմոս 103:13

2- Իմ Հայրը վստահելի է

«Հայր, հոգիս քո ձեռն ԵՄ ԱՎԱՆԴՈՒՄ.»

«Ուղիղ է տիրոջ խոսքը, և նրա ամեն գործերը հավատարմությունով են.» Սաղմոս 33:4

3- Նա կարող է գործել անտեսանելիորեն

«Հայր, ՀՈԳԻՍ քո ձեռն եմ ավանդում.»

«Դեպի հույսիս՝ իր գործողությունումը, և չեմ գիտում. հարավումն է ծածկվում, և ես նրան չեմ տեսնում: Սակայն նա գիտի իմ ճանապարհը. ինձ փորձելիս՝ ես ոսկիի նման դուրս կգամ.» Հոբ 23:9-10

«Որովհետև մեր այժմեան թեթև նեղությունը ամենագերագանց հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար, Որ այս երևող բաներին չենք մտիկ անում, այլ աներևույթներին. որովհետև երևողները

ժամանակավոր են, իսկ չերևողները հավիտենական:» Բ Կորնթացիս 4:17-18

4- Նա կարող է պահել ամեն ինչ որ իրեն եմ հանձնում

«Հայր, հոգիս քո ձեռն եմ ավանդում.»

Աստծո Ձեռքերը...

- Մեծ են ինձ օրհնելու չափ

«Իմ ետևիցն և առաջիցը պատում ես ինձ, և քո ձեռքը դրել ես ինձ վրա:» Սաղմոս 139:5

- Ծակված են որ երբեք ինձ չմոռանան

«Մի՛թե կինը կմոռանա իր կաթնակեր մանուկին, որ չգթա իր որովայնի ծննդյան վրա. նրանք եթե մոռանան էլ, բայց ես քեզ չեմ մոռանալ: Ահա ես իմ ձեռքի մեջ եմ նկարագրել քեզ.» Եսայ 49:15-16

- Զորավոր են այնքան որ ինձ պահում են ապահովության մեջ

«Եվ ես հավիտյան կյանք եմ տալիս նրանց, և ոչ ով չի հափշտակել նրանց իմ ձեռիցը: Իմ Հայրը որ նրանց տվավ ինձ, ամենից մեծ է, և ոչ ով կարող չէ իմ Հոր ձեռիցը հափշտակել նրանց:» Հովհաննես 10:28-29

«Վասնզի չենք կամենում, եղբայրք, որ դուք չգիտենաք այն նեղությունն որ Ասիայումը մեզ եղավ. որ մեր կարողությունիցն ավելի ծանրաբեռնվեցանք. մինչև որ մեր կյանքի հույսն էլ կտրել էինք: Բայց հենց մենք ինքներս մեզ վրա մահվան վճիռն ունեինք. որպեսզի մեր անձերի վրա հույս չդնենք, այլ Աստծո վրա որ մեռելներին հարուցանում է.» Բ Կորնթացիս 1:8-9